



# ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

«Բաց կառավարման գործընկերության» ծրագրի

2018-2020թթ-ի ռազմավարության

վեց ոլորտային բարեփոխումների վերաբերյալ

հանրային կարծիքի

## Բովանդակություն

Նախաբան.....	3
Ուսումնասիրության մեթոդաբանությունը.....	3
Ուսումնասիրության իրականացումը.....	4
Ընդհանուր նկատառումներ և առաջարկություններ վեց ոլորտային բարեփոխումների վերաբերյալ՝ համաձայն ուսումնասիրության.....	17
Հանձնառություն 1. ՏԻՄ հաշվետվողականություն վարչական ծառայությունների էլեկտրոնային հարթակի ստեղծման (էլեկտրոնային ծառայությունների տրամադրման) և համայնքային բյուջեների կազման հարցերում.....	8
Հանձնառություն 2. Ջրային ռեսուրսների պետական կադաստր. Ջրային ռեսուրսների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում.....	10
Հանձնառություն 3. ՀՀ հողային կադաստրի հանրային հասանելիության ապահովում.....	11
Հանձնառություն 4. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար քաղաքացիների առցանց հերթագրման հնարավորություն.....	13
Հանձնառություն 5. Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգ.....	15
Հանձնառություն 6. Open & Social. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն և իրազեկվածության բարձրացում . . . . .	17
Հավելված 1. Հանրային քննարկման սցենարներ.....	23

## Նախարան

2018թ. սեպտեմբերից 2019թ. մայիս ամիսներին Արմավիրի զարգացման կենտրոն հասարակական կազմակերպությունը (ԱԶԿ ՀԿ)՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ համատեղ իրականացրել է հանրային կարծիքի ուսումնասիրություն «Բաց կառավարման գործընկերության» (ԲԿԳ) ծրագրի 2018-2020թթ.-ի ռազմավարության վեց ոլորտային բարեփոխումների շուրջ:

Ուսումնասիրության նպատակն է եղել քննարկել կառավարության թափանցիկության և հաշվետվողականության վերաբերյալ հանձնառությունների փաթեթի (փաթեթը ներառում է տասնմեկ հանձնառություն) վեց հանձնառություններ, որոնք մշակվել են «Աջակցություն ԲԿԳ գործողությունների ծրագրի համատեղ մշակմանն ու իրականացմանը» ծրագրի շրջանակներում:

«Աջակցություն ԲԿԳ գործողությունների ծրագրի համատեղ մշակմանն ու իրականացմանը» ծրագրի նպատակն է ստեղծել համայնքային և ազգային մակարդակով հանձնառությունների հավակնոտ ծրագիր՝ ի նպաստ կառավարության թափանցիկության և հաշվետվողականության, կառավարության պատասխանատվության և քաղաքացիների ներգրավվածության բարձրացման:

Քննարկված վեց հանձնառությունների իրականացման վերաբերյալ կարծիքի ուսումնասիրության արդյունքներն ամփոփվել են ԱԶԿ ՀԿ փորձագետների կողմից և ներկայացվելու են ՀՀ Կառավարությանը՝ հանձնառությունների իրականացման փուլում հանրային կարծիքը հաշվի առնելու համար:

## Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Ուսումնասիրությունն իրականացվել է գործողությունների (քայլերի) հետևյալ հաջորդականությամբ.

- 1) Հանձնառությունների փաթեթից վեց հանձնառությունների ընտրություն,
- 2) Առանձնացված վեց հանձնառությունների վերաբերյալ հանրային լսման սցենարների մշակում,
- 3) Հանրային քննարկումների կազմակերպում ՀՀ 9 մարզերի և մայրաքաղաք Երևանի քաղաքացիների, ՔՀԿ-ների, ՓՄՁ-ների և հանրային ծառայողների մասնակցությամբ՝ Երևանում, Լոռու և Վայոց Ձորի մարզերում,
- 4) Հանրային լսումներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն, առաջարկությունների մշակում:

## Ուսումնասիրության իրականացումը

### Քայլ 1. Հանձնառությունների փաթեթից վեց հանձնառությունների ընտրություն:

ԲԿԳ գործողությունների չորրորդ ծրագիրը համալրելու նպատակով «Բաց կառավարման գործընկերություն» ծրագրի գործողությունների մասին մարզային հանդիպումների միջոցով իրազեկման արշավ և գաղափարների մրցույթ է իրականացվել: «Crowdsourcing» գործիքի միջոցով բոլոր քաղաքացիները՝ անկախ մասնագիտական և տարիքային չափանիշների, կարող էին ներկայացնել ԲԿԳ սկզբունքներից բխող հստակ առաջարկություններ ՀՀ կառավարության աշխատակազմ՝ [ogp@gov.am](mailto:ogp@gov.am) էլ. փոստի միջոցով:

Հավաքագրվել է մոտ 95 առաջարկ, որոնք քննարկվել են աշխատանքային խմբերում ու արդյունքում դրանցից տասնմեկը, որոնք առավելագույնս համապատասխանում էին ԲԿԳ արժեքներին, ընտրվել են որպես հանձնառություններ:

Հանձնառությունների փաթեթից վեց հանձնառություններ առանձնացվել են հանրային քննարկման համար՝ համաձայն մարզային հանդիպումներում դրանց կարևորության շեշտադրման:

### Քայլ 2. Առանձնացված վեց հանձնառությունների վերաբերյալ հանրային լսման սցենարների մշակում:

Ընտրված վեց հանձնառությունների հիման վրա ԱԶԿ ՀԿ-ի փորձագետները մշակել են հանրային քննարկման սցենարներ (*Հավելված 1*):

### Քայլ 3. Հանրային քննարկումների կազմակերպում ՀՀ 9 մարզերի և մայրաքաղաք Երևանի քաղաքացիների, ՔՀԿ-ների, ՓՄՁ-ների և հանրային ծառայողների մասնակցությամբ Երևանում, Լոռու և Վայոց Ձորի մարզերում:

Այս փուլում իրականացվել է հանրային քննարկման (Town hall) կազմակերպումն ու անցկացումը՝ համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ:<sup>1</sup>

Հանրային քննարկումներ կազմակերպվել են Երևանում, Լոռու և Վայոց Ձորի մարզերում ՀՀ 9 մարզերի և մայրաքաղաք Երևանի քաղաքացիների, ՔՀԿ-ների, ՓՄՁ-ների և հանրային ծառայողների մասնակցությամբ:

Երևան քաղաքում կազմակերպված հանրային քննարկումներին (թվով երկու) մասնակցել են 82, Լոռու մարզում կազմակերպված հանրային քննարկմանը՝ 79, Վայոց Ձորի մարզում կազմակերպված հանրային քննարկմանը՝ 71 մասնակից:

Յուրաքանչյուր հանրային քննարկմանը մասնակիցները բաժանվել են 6 խմբերի՝ յուրաքանչյուր խմբում միջինում 10-12 մասնակից: Ամեն խմբում ծրագրի կազմակերպիչների

<sup>1</sup> Chapter guide to organizing, planning and executing a Town Hall meeting, <https://www.acep.org/uploadedFiles/ACEP/advocacy/state/Guide%20to%20Hosting%20a%20Town%20Hall%20Meeting.pdf>

կողմից ընդգրկվել են երկու մասնակից, որոնցից մեկը վարել ու համակարգել է քննարկման ընթացքը, իսկ մյուսը կատարել է համապատասխան նշումներ:

Հանրային քննարկման մասնակիցների ընդգրկումը խմբերում իրականացվել է պատահականության սկզբունքով, սակայն կազմակերպիչների կողմից ապահովվել է մեկ խմբում նույն համայնքից, նույն աշխատավայրից/ոլորտից առավելագույնը 1 կամ 2 ներկայացուցչի մասնակցությունը, ինչը հնարավորություն է տվել խուսափելու՝ իրար խանգարելու կամ քննարկման վրա բացասական ազդեցություն ունենալու խնդրից և բոլոր խմբերում առավելագույն թվով համայնքների ու ոլորտների ներկայացվածությունն ապահովելու համար:

Յուրաքանչյուր սցենարի քննարկումը տևել է 20 րոպե. ընդհանուր թվով 4 սցենար՝ հանձնառություն է քննարկվել յուրաքանչյուր հանրային քննարկման ժամանակ:

#### Քայլ 4. Հանրային լսումներից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն, առաջարկությունների մշակում:

Հանրային լսումների արդյունքում ստացված տեղեկատվությունը խմբավորվել է ըստ առանձին հանձնառությունների, որից հետո ԱԶԿ ՀԿ-ի փորձագիտական թիմը, ամփոփելով տեղեկատվությունը, իրականացրել է դրա վերլուծությունը: Վերլուծության արդյունքում յուրաքանչյուր հանձնառության մասով մշակվել են առաջարկություններ, որոնք տրամադրվելու են կառավարությանը՝ հանձնառությունների իրականացման փուլում հանրային կարծիքը հաշվի առնելու նպատակով:

#### Ընդհանուր նկատառումներ և առաջարկություններ վեց ոլորտային բարեփոխումների վերաբերյալ՝ համաձայն ուսումնասիրության

##### *ՏԻՄ հաշվետվողականություն վարչական ծառայությունների էլեկտրոնային հարթակի ստեղծման (էլեկտրոնային ծառայությունների տրամադրման) և համայնքային բյուջեների կազմման հարցերում*

Համայնքապետարանների կայքերով էլեկտրոնային ծառայությունների մատուցումը սկզբնական շրջանում մարտահրավերային էր համայնքապետարանի աշխատակիցների համար, բայց հիմա սովորել են ու օգտակար են համարում, բայց սպասարկումն է դանդաղել: Մրան գուգաիեռ կա նաև այն համոզմունքը, որ այնուամենայնիվ, համայնքապետարանի աշխատակիցները կարիք ունեն վերապատրաստման, շատերը ծրագրին չեն տիրապետում: Մյուս կողմից՝ բնակիչն ինքը պատրաստ չի օգտվելու առցանց այն հնարավորություններից, որ ՏԻՄ կայքերն ունեն այսօր:

Այնուամենայնիվ, քննարկման համաձայն՝ համայնքները, անկախ բնակչության թվից, պետք է ունենան համայնքային պաշտոնական կայքէջեր, որոնք անհրաժեշտ է համալրել հետևյալ տեղեկատվությամբ, տեխնիկական հնարավորություններով.

- Բնակչության վայրի մասին տեղեկանքի առցանց ստացման հնարավորություն:
- Համայնքի բնակիչների մասին տեղեկատվության առկայություն (սեռատարիքային կազմ, զբաղվածություն, մասնագիտություն և այլն):
- Համայնքի ու համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող կառույցների բյուջեները՝ իրենց նկարագրողականներով (բացվածք) և դրանց կատարողականները, պայմանագրերը տեղադրել կայքում ոչ թե պատճենահանված տարբերակով (սքան), այլ այնպիսի ֆորմատով, որ հնարավոր լինի տվյալների հետ աշխատել, վերլուծություններ անել (data visualization):
- Համայնքում առկա բոլոր հանրային կառույցների մասին տեղեկատվության տրամադրում (հասցե, բյուջե, մատուցվող ծառայություններ, համայնքի պատմամշակութային կամ տուրիզմի համար հետաքրքրություն ներկայացնող ցանկացած օբյեկտի, իրադարձության կամ երևույթի մասին տեղեկատվություն և այլն):
- Հաստիքացուցակների հրապարակում, բաց մրցույթներով աշխատողների ընտրություն:
- ՏԻՄ-ի լիազորությունների ու պարտականությունների մասին տեղեկատվության առկայություն (մատչելի ձևով):
- Համայնքներում, որտեղ գործում է երթուղի, ժամային գրաֆիկի առկայություն:
- Տեղական մակարդակում e-draft մոդելի կիրառում, այն է՝ համայնքապետի, ավագանու որոշումների նախագծերի տեղադրում համայնքապետարանի կայքում՝ տեղեկացման և քննարկման նպատակով՝ բաժանորդագրման մեխանիզմով:
- Ավագանու նիստերի ուղիղ եթերների հեռարձակմանը զուգահեռ՝ հարցեր տալու առցանց հնարավորություն:
- Համայնքային կայքերը լինեն դինամիկ ու պարբերաբար թարմացվեն այն բոլոր կարևոր հայտարարություններով, իրադարձություններով (Հայտարարությունների բաժին), որ տեղի են ունենում համայնքում (ավագանու նիստերի հեռարձակում, հոսանքի անջատում և այլն) և պատշաճ ու օպերատիվ աշխատեն (նամակներին ուշ են պատասխանում կամ չեն պատասխանում, էլ. փոստերը չեն աշխատում և այլն):
- Հնարավորություն օնլայն ստանալու բնակիչների բողոքներն ու նրանց կողմից արձանագրված խնդիրները (ամեն համայնքի համար կարող է անգամ օնլայն հավելված ստեղծվել, որը ներբեռնելով՝ խնդիրները կարող ես մուտքագրել համակարգ):
- Համայնքային կայքերի տեսանելիության բարձրացում սոց. ցանցերի միջոցով. երիտասարդների ակտիվ ներգրավում կայքերի տեսանելիությունն ավելացնելու գործում:

- Բնակչության իրազեկում այն բոլոր հարթակների մասին, որ ստեղծվել են հանրային կառավարմանը մասնակցելու համար, ինչպես նաև մասնակցության մեխանիզմների հստակեցում ու մոտիվացում:
- Համայնքում իրականացվող աշխատանքների մասին մշտական իրազեկում՝ որպես հաշվետվություն՝ լուսանկարների ու տեսահոլովակների միջոցով:
- Գովազդների, առևտրի, շին. թույլտվությունների տրամադրման կարգի մասին պատշաճ իրազեկում (նախքան շինարարության սկսելը ու ընթացքում՝ ցուցանակի տեղադրում, որտեղ կլինի օրենքով ամրագրված այն բոլոր տեղեկատվությունը, որ պետք է տրամադրվի հանրությանը տվյալ շինարարության մասին, քանի որ անգամ օրինական շինարարությունների դեպքում բնակիչները բողոքում են), այնուհետև՝ դրանց հրապարակում՝ այդ թվում և մերժումները ու դրանց հիմքերը:
- Շին. թույլտվությունների գնային քաղաքականության վերանայում, օրենքի վերանայում, շին. թույլտվությունների ամբողջական փաթեթի տեղադրում կայքում (քաղաքացու համար ավելի նպատակահարմար է առանց նախագծի, շին. թույլտվության իրականացնել շինարարություն, ապա՝ ինքնակամ կառույցի թույլտվություն վերցնել կամ տույժ ու տուգանք վճարել, որոնք ֆինանսապես ավելի շահավետ են: Համայնքի համար էլ շահավետ է, քանի որ բյուջե գումար է մուտք լինում: Ստուգումների ժամանակ էլ նշված մեխանիզմներից մեկով հարցը լուծվում է):

Բացի համայնքային կայքերի ու դրանում վարչական տարբեր ծառայությունների էլեկտրոնային հնարավորությունների առկայությունից ու դրանցում առաջարկվող փոփոխություններից, ՏԻՄ-ի արդյունավետ և հաշվետու կառավարման համար կարևոր են նաև.

- Բնակչության պետական ռեգիստրի տվյալների թարմացման արդյունքների հասանելիությունը բազայով, որպեսզի բնակչին չուղարկեն անձնագրային բաժին թղթի հետևից՝ փոփոխված հասցեների պատճառով:
- Համայնքների զարգացման ծրագրերը գրելուց հանրային քննարկումների կազմակերպում:
- Համայնքային բյուջեի քննարկումների իրականացում:
- Հանրային քննարկման բաց, օֆլայն հարթակի ստեղծում և գործարկում՝ տարեկան հաշվետվությունների ու համայնքում ծավալվող ամենատարբեր միջոցառումների մասին օֆլայն քննարկումների ու իրազեկման նպատակով (կայքում տեղադրված և տեղադրվելիք այն տեղեկատվությունը, որի մասին նշել ենք վերևում, և հատկապես այն մասը, որն ուղիղ կապ ունի ՏԻՄ-ի հաշվետու աշխատանքի հետ, քննարկվի նաև օֆլայն, քանի որ հատկապես համայնքներում սա դեռևս կենսունակ մեխանիզմ է):
- ՏԻՄ-երին կից խորհրդակցական մարմինների (ԽՄ) ստեղծումը, դրա կազմակերպման ձևերի հստակեցումը, որպեսզի իրականում կատարեն իրենց գործառնությունները, որի համար անհրաժեշտ է.

1. Հաստատել ԽՄ-ների կազմում ներգրավվող անդամների առավելագույն և նվազագույն քանակները, դրանցում ավագանիների, համայնքապետարանի աշխատակիցների և հասարակության ներկայացուցիչների (այդ թվում ՔՀԿ և փորձագիտական ոլորտների) առավելագույն քանակները՝ պահպանելով որոշում կայացնողների և իշխանություն ունեցողների ու հասարակության ներկայացուցիչների բալանսավորվածություն:
2. ԽՄ անդամների հավաքագրումն իրականացնել բաց հայտարարությամբ և ընդունել հայտադիմումներ:
3. Հստակեցնել անդամների ընտրության կարգն ու ձևը՝ համաձայն հայտադիմումների (ըստ դիմելու առաջնահերթության կամ ըստ փորձառության և այլն):

### ***Ջրային ռեսուրսների պետական կադաստր. ջրային ռեսուրսների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում***

Ջրային ռեսուրսների սակավությունը լինելով գլոբալ էկոլոգիական խնդիր՝ մեզանում բավարար հասկացված չէ, քանի որ մենք, ունենալով այդ կարևոր ռեսուրսը, օգտագործում ենք այն առավելագույնս անարդյունավետ:

Ջրային ռեսուրսների տնօրինումը ՀՀ-ում մենաշնորհներից մեկն է. շատ քիչ տոկոսն է ջրային ռեսուրսների, որ անօրինական է սպառվում սովորական բնակչի կողմից: Ջրային ռեսուրսների ուսումնասիրությունը մեզանում ամենից բաց ոլորտներից է, որի պատճառներից մեկը և, թերևս գլխավորը, ֆինանսական մեծ ծախսերն են, բայց առանց այդ ուսումնասիրությունների էլ հնարավոր չէ ոլորտը արդյունավետ կառավարել, կարիքները ճշգրիտ ներկայացնել ներդրողներին, քանի որ առկա ինֆորմացիան հնացած է, իսկ բնակլիմայական պայմանների փոփոխությունը թույլ չի տալիս գծայնորեն կանխատեսումներ անել, քանի որ կլիմայի պատճառով ռեսուրսներն ավելի են նվազում:

Այսպիսով՝ նախքան ջրային ռեսուրսների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումը, կան հետևյալ անելիքները.

- Ստորերկրյա քաղցրահամ ջրերի պաշարների գնահատում (ՀՀ-ում արվել է 1983-84 թթ.), աղբյուրների գույքագրում, տեղորոշում (ջրային ռեսուրսների քարտեզագրումը դառնա ՏԻՄ-երի հնգամյա զարգացման պլանի պարտադիր բաղադրիչ):
- Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մակերևութայինի հաշվեկշռի կազմում (ՀՀ-ում իրականացվել է 2008թ-ին):
- Ռազմավարական պաշարների ու ազգային պաշարների մասին ինֆորմացիայի հստակեցում (որը, սակայն, որպես գաղտնի տվյալ՝ չպետք է հրապարակվի):



- Գեոդեզիական ուսումնասիրությունների իրականացում (թե որտեղ կարելի է խորքային հորեր փորել, որտեղ՝ ոչ և այլն):
- Խորքային հորերի վերահսկողություն, անօրինական հորերի օրինականացում ու տուգանքների գանձում՝ դրանց անօրինական շահագործման դիմաց:
- Ջրի կորուստների կառավարում (հանրային վայրերի ցայտադրյուրներին հատուկ ծորակների տեղադրում և այլն), դրանց կանխարգելում, ջրագծերի վերանորոգում, տեղական մակարդակում պոմպերի տեղադրում, որպեսզի և՛ ջրի պաշարները արդյունավետ օգտագործվեն, և՛ բնակիչը չվճարի կորուստների համար, ինչպես անում է:
- Կաթիլային ոռոգման համակարգի, նոր տեխնոլոգիաների ներդրում, փակ խողովակաշարով ոռոգում (որի ծախսը կարելի է իրականացնել հենց ջրի կորստի հաշվին). բաց ոռոգումը հաճախ ջրի կորուստների ու սպառողների կոնֆլիկտների պատճառ է դառնում:
- Լիցենզիաների, թույլտվությունների ստացման կարգի հստակեցում, դրանց ստացման էլեկտրոնային հնարավորություն՝ տրամադրման ժամկետների սահմանմամբ, տրված թույլտվությունների ու մերժումների հրապարակում՝ մերժման հիմքերով:
- Ջրերի որակի ստուգումների, փորձաքննությունների իրականացում:
- ՋՕ-երի վերացում և ջրի (խմելու և ոռոգման) տրամադրումը համայնքներին/պետությանը (սա կկանխի նաև գնային քաղաքականության կամայականությունները, որ իրենց թույլ են տալիս ՋՕ-երը):
- Ջրային ռեսուրսների կառավարման մոդելի բարելավում՝ ջրաբաշխման ճիշտ մեխանիզմների ներդրում, ջրի տրամադրում գյուղացուն ժամանակին՝ առանց ձգձգումների և այլն:
- Ջրի պահեստավորման քաղաքականության մշակում ու անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցում (ջրամբարաշինություն և այլն):
- Ջրաչափերի տրամադրում ու վճարման մեխանիզմների հստակեցում (ջրի գնի տարբերվող քաղաքականություն՝ ըստ տարածաշրջանների), վարձավճարների գանձման էլեկտրոնային եղանակի ներդրում՝ գործընթացի թափանցիկ կազմակերպման համար:
- Սպառողի/համայնքի կողմից ջրի՝ աղբյուրի օգտագործման սահմանաչափի սահմանում, վերահսկողության պատշաճ իրականացում և այն խախտելու պարագայում տուգանքների մեխանիզմների կիրառում (ՀԷԿ, ձկնաբուծարան)՝ մարզային իշխանությունների կողմից:
- Տարվա սկզբին առկա ջրային պաշարների ծավալների մասին հանրությանը իրազեկում, որպեսզի գյուղացիները կողմնորոշվեն գյուղատնտեսական այդ տարվա իրենց գործունեությունը պլանավորելիս:
- Բնակիչների իրազեկում ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման կարևորության մասին (տարեկան մի քանի անգամ համայնքապետարանում

թրեյնինգների կազմակերպում մասնագետների կողմից, իրազեկվածության բարձրացում՝ տարբեր հոլովակների միջոցով, որոնք կցուցադրվեն հեռուստատեսությամբ, դպրոցի տարբեր առարկաների դասագրքերում՝ «Շրջակա միջավայր», «Բնագիտություն», խնդրի ներկայացում ու համապատասխան շեշտադրումներ և այլն) և պարբերաբար մոնիթորինգի իրականացում (ՀԿ-ների կողմից), հետադարձ կապի ստացում ու շտկումների իրականացում համակարգում:

- Բնակիչների իրազեկում ջրային ռեսուրսների օգտագործման կարգի մասին (խորքային հորերի թույլտվություններ, օրինականացման կարգ և այլն):
- Համայնքապետարանների աշխատակիցների վերապատրաստում, հատկապես համայնքապետի ու մեկ աշխատակցի, ով պատասխանատու է լինելու բնակիչներին ուղորդելու համար:
- Բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցների վերապատրաստում:
- «Վեոլիա ջուր» ընկերության աշխատանքների թափանցիկության ապահովում (այն դարձել է շատ անձեռնմխելի և վատ աշխատող կառույց):
- Ջրային ռեսուրսների միասնական տեղեկատվական էլեկտրոնային համակարգին զուգահեռ՝ ներկայիս աշխատանքային պրակտիկաների պահպանում, քանի որ համակարգից օգտվելիս, հատկապես սկզբնական շրջանում, խնդիրներ կառաջանան՝ մասնավորապես գյուղական համայնքներում:
- Ջրային ռեսուրսների միասնական տեղեկատվական էլեկտրոնային հարթակի հնարավորություն, որ մասնագետը պատասխանի սպառողներին հուզող ցանկացած հարցի:

### ***ՀՀ հողային կադաստրի հանրային հասանելիության ապահովում***

Մասնագետների և հետազոտության արդյուքների համաձայն՝ հողային կադաստրն ունի երկու մեծ խնդիր: Առաջին խնդիրը տեղեկատվություն ստանալու համար սահմանված բարձր գնային համակարգն է, երկրորդը, և, թերևս ամենամեծը՝ հողային կադաստրում առկա տեղեկատվության անճշտությունները (գույքագրման, քարտեզագրման և այլն):

Առաջին խնդրի կարգավորման համար առաջարկվող անհրաժեշտ, բայց ոչ բավարար քայլը վճարովի հիմունքներով տրամադրվող տեղեկատվության մեծ մասի հանրայնացումն է և/կամ անվճար տրամադրումը, ինչն իր հերթին կնվազեցնի կոռուպցիոն շատ ռիսկեր: Խոսքը սույն տվյալների, փաստաթղթերի հասանելիության ապահովման և էլ. համակարգում դրանց ներառման մասին է.

- ✓ Հողի և գույքի հարկ,
- ✓ Համայնքապետական հողեր ու տարածքներ,
- ✓ Հանրային նշանակության օբյեկտներ,

- ✓ Կալանքի տակ եղած գույք,
- ✓ Հողային կադաստրի և հողօգտագործման սխեմաների ու գոտիավորման փաստաթղթերի հասանելիություն՝ ըստ համայնքների:

Տեղեկատվության հանրայնացման հետ կապված կա բախում այն իմաստով, որ, օրինակ, սեփականատերը չի ցանկանում բարձրաձայնել իր սեփականության մասին ու հետևաբար ինչպե՞ս պետք է կարգավորվել նման դեպքերի հանրայնացման գործընթացը:

Տեղեկատվության անճշտությունների վերացման կամ պակասեցման խնդրի և ոլորտի մյուս խնդիրների լուծման ուղղությամբ հնչել են հետևյալ առաջարկները.

- Գույքագրման, քարտեզագրման իրականացում՝ անկախ կազմակերպության կողմից:
- Մեկ միասնական հարթակի ստեղծում, որտեղ քարտեզագրված կլինեն հողատարածքները՝ ըստ սեփականատերերի, տնօրինման ձևերի (սեփական, վարձակալված և վաճառքի՝ շուկայական արժեքներով) ժամկետների, գոտիավորման, հողերի նշանակության ու դրանց փոփոխությունների՝ գույներով, նշաններով վիզուալացված:
- Ջրօգտագործման և հողօգտագործման քարտեզների համադրման հնարավորություն կամ մեկ միասնական քարտեզի ստեղծում, որի միջոցով հնարավոր կլինի տեսնել հողերի ոռոգելի լինելու հնարավորությունները ու նշանակությունը՝ (անասնապահական տարածք է, մշակովի և այլն):
- Համայնքային հողերի վաճառքի իրականացում մրցութային կարգով՝ ֆիքսված մեկնարկային գնով (1 քառ մետրի արժեքի սահմանմամբ) և մրցույթների մասին հայտարարությունների տեղադրում կայքում, որպեսզի տեղեկատվությունը բաց ու հասանելի լինի բոլորի համար:
- Համայնքապատկան հողերի ժամանակավոր տիրապետման լիազորության տրամադրում՝ ներքին փոխհամաձայնությամբ:
- Երկրից բացակայող հող տիրապետողների կամ այն օգտագործողների՝ հարկերի վճարման պարտաճանաչության ուսումնասիրություն, անհրաժեշտ քայլերի ձեռնարկում:
- Գյումրու և Սպիտակի տնակների տակի հողի սեփականաշնորհում, քանի որ դրանք պարզապես հաշվառված են ապրողների անունով, բայց հաշվառվածները վտանգ են տեսնում, որ մի օր մեկը կարող է գալ ու իրենց հանել՝ հողի սեփականության իրավունքի հիմքով:
- 2018թ.-ի վերջին առաջարկված հողերի աճուրդի մեթոդի ներդրում, որի համաձայն հողի տիրապետման կարգի վերաբերյալ պետք է պայմանագիր կազմվի, նոտարով վավերացվի: Եթե 3 տարվա ընթացքում պայմանագրի համաձայն ներդրում չի անում հողը տիրապետողը/օգտագործողը, այն ետ է վերադարձվում համայնքին, սահմանվում է հողի տեղադիրքը, որը քարտեզով ներկայացվում է: Այս ամենի վերաբերյալ ամեն հայտարարություն, որոշում, նյութ առցանց հրապարակվում է:

***Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար քաղաքացիների առցանց հերթագրման հնարավորություն***

Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար քաղաքացիների առցանց հերթագրման հնարավորությունն առողջապահական ոլորտի այնպիսի բարեփոխումներից է, որ բարձրացնելու է ոլորտի թափանցիկությունը, քանի որ չկան մոնիտորինգային տվյալներ պետպատվերի շրջանակում տրամադրվող ծառայությունների վերաբերյալ:

Համակարգի գործարկումը շատ լավ հնարավորություն է պետպատվերից օգտվող շահառուի համար՝ առանց քաշքշուկների, տնից կազմակերպելու անհրաժեշտ ծառայությունից օգտվելու տեխնիկական բոլոր հարցերը:

Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում փաստացի կատարված աշխատանքների, առկա տեղերի և հերթագրումների մասին հանրությանը իրազեկելու և թափանցիկ դարձնելու համար ստեղծվել է <https://www.armed.am/govlimits/> կայքը, որտեղ երեք գույնով ցուցադրվում են սպառված, հերթագրված և առկա տեղերը ու ֆինանսական սահմանաչափերը: Կայքը հնարավորություն է տալիս իրականացնել նաև առցանց հերթագրումներ:

Մեզանում նման համակարգի գործառնումն իր տեսակով նոր է ու որոշ մշակութային, տեխնիկական, հասանելիության ու իմացության հետ կապված խնդիրներ կարող են առաջ գալ, որոնց կանխատեսմանն ու կանխարգելմանը պետք է ուղղված լինեն պետպատվերի շրջանակում տրամադրվող ծառայությունների ու կայքի զարգացման հետագա քայլերը: Անհրաժեշտ է.

- Պետպատվերի տրամադրման չափորոշիչների լրամշակում պետության կողմից՝ նվազեցնելու համար ուղեգրերի տրամադրման կարգի ու քանակի՝ օրենքը շրջանցելու հնարավորությունները:
- Անհետաձգելի բժշկական միջամտությունների համար հիվանդներին արտահերթ հերթագրվելու հնարավորության տրամադրում՝ կայքում ապահովելով համապատասխան հնարավորություն:
- Որոշ անհետաձգելի հետազոտությունների պարագայում՝ հաշվի առնելով հերթերի առկայությունը, ընթացակարգերի սահմանում, որ հիվանդներն իրենց գումարով հետազոտվեն, ապա պետությունը փոխհատուցի նրանց (օրինակ ԿՏ-ի հերթագրվելը շատ երկար է տևում, իսկ հիվանդին սովորաբար արագ է պետք այդ ստուգումն անցնել),

- Ժամկետներ սահմանել, թե որքան ժամանակում պետք է իրականացվի տվյալ բժշկական միջամտության/հետազոտության կարիք ունեցող հիվանդի հերթագրումը:
- Յուրաքանչյուր հիվանդի համար պետպատվերի շրջանակում ծառայություններից օգտվելու շեմի սահմանում, օրինակ, 1 տարվա կտրվածքով:
- Համակարգից, կայքից օգտվելու մասին հանրային իրազեկվածության բարձրացում (մեդիա արշավների իրականացում, տեսահոլովակների միջոցով հեռուստատեսությամբ իրազեկում, համայնքապետարանների կայքերում կայքի հղումի տեղադրում, պետպատվերից օգտվողներին զանգի միջոցով տեղեկացում և այլն)՝ առավելագույնս տեղեկացնելով շահառուներին համակարգի մասին ու նվազեցնելով հնարավոր ռիսկերը (օրինակ, մտավախություն կա, որ բժիշկները կարող են ուղորդել հիվանդներին հերթագրվելու այս կամ այն բժշկական հաստատությունում և այլն):
- Բժշկական հաստատությունների մասնագետներին իրազեկում և վերապատրաստում՝ համակարգը ամբողջությամբ պատկերացնելու, կայքից օգտվելու համար:
- Շահառուների հետադարձ արձագանքները լինեն հանրային՝ ըստ բժշկական հաստատությունների, որը որակի վերահսկողության կարևոր մեխանիզմ կլինի:
- Կայքում օգտագործել տվյալների վիզուալիզացիաներ՝ գումարի բաշխման գրաֆիկներ, ծառայությունների արժեքներ և այլն՝ ավելի պատկերավոր ու տեսանելի դարձնելու համար ինֆորմացիան:
- Կայքում որոնողական համակարգում փնտրելու հնարավորություն՝ ըստ ծառայությունների, ըստ բժշկական հաստատությունների, ըստ առկա տեղերի և այլն:
- Համակարգից օգտվելու հավելված մշակել հեռախոսների համար:
- Ինտերնետ կապի հասանելիություն չունեցող բնակավայրերի շահառուների համար համակարգից օգտվելու այլընտրանքների դիտարկում:
- Հերթագրումները չեղարկելու և թարմացնելու հնարավորություն, որպեսզի անտեղի հերթերից խուսափել:
- Հնարավորություն ոչ միայն ընտրելու բուժ. հաստատությունը, այլև՝ բժշկին, քանի որ վստահության խնդիր կա:

## *Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգ*

Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգի ստեղծումը գնահատվեց որպես կարևոր բարեփոխում, որը հնարավորություն կտա միասնական էլեկտրոնային կառավարման միջոցով տեղեկատվության ամբողջականության ապահովման, հավաստիության, հանրային հաշվետվողականության, աշխատանքի արդյունավետության բարձրացման:

Բայց մինչ սրան անդրադառնալը, քննարկման մասնակիցները այս համակարգի ստեղծման անհրաժեշտության հիմնական պատճառ համարեցին այն գերխնդիրը, որ կա, այն է՝ նախակրթական հաստատություններում տեղերի սահմանափակումները, որն էլ պայմանավորում է մի շարք խնդիրներ ու ռիսկեր, որոնց կառավարմանն ու կանխարգելմանն է ուղղված նաև կրթության կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումը:

Հետևաբար, կարևոր է ուսումնասիրել ոլորտում առկա պահանջարկը համակողմանիորեն՝ Երևանի ու գյուղական համայնքների դեպքերն առանձին հասկանալով, և քայլեր ձեռնարկել դրանք կարգավորելու ուղղությամբ: Այս ուսումնասիրության համար, իհարկե, կարևոր գործիք կարող է հանդիսանալ հենց տեղեկատվական միասնական համակարգի ստեղծումը, որը հնարավորություն կտա.

- Վերահսկել երեխաների հերթագրումները, մի ուսումնական հաստատությունից մյուսը (նաև տարբեր կրթամակարդակների) տեղափոխման գործընթացը, ուսումնական հաստատություններ ընդունելության և տեղափոխման մեխանիզմները՝ ապահովելով թափանցիկությունն ու նվազեցնելով վարչարարությունը:
- Բացառել կրթության տարբեր մակարդակներում միաժամանակ նույն սովորողի բազմակի հաշվառման դեպքերը:
- Բացառել երեխաների թվաքանակի ավել գրանցումների հաշվին ավելի շատ սնունդ և օգնություն ստանալու հնարավորությունները:

Որպեսզի համակարգն իրականացնի վերը նշված գործառնությունները և հաշվի առնվեն շահառուների այլ կարիքները ևս, այն պետք է ներառի.

- Քարտեզագրման տվյալներ՝ ըստ բնակության վայրի և մոտ գտնվող նախակրթական հաստատությունների՝ որպես հերթագրման առաջնային չափորոշիչ: Բայց հերթագրման համար պարտադիր պայման չպետք է դա լինի. նախընտրության հնարավորություն պետք է թողնել համակարգում՝ ընտրության օբյեկտիվ չափորոշիչներով (ծնողն աշխատանքի վայրին մոտ մանկապարտեզն է նախընտրել և այլն), որպեսզի խուսափել այն խնդրից, որ որոշ նախակրթական հաստատություններ «հայտնի» են ու նախընտրելի:

- Հերթագրումների ժամանակային տարբերակում, որպեսզի կրթական հաստատությունում սահմանափակ տեղ լինելու դեպքում հնարավոր լինի նախապատվություն տալ վաղ հերթագրվածներին:
- Տարիքային ֆիլտրացիայի հնարավորություն՝ անկախ հերթագրված լինելու ժամանակահատվածից, որպեսզի տեղերի սահմանափակ լինելու պարագայում նախապատվություն տրվի այն երեխաներին, ովքեր այդ տարի պետք է դպրոց գնան:
- Կրթական հաստատությունների մատչելիության, կրթական գործընթացի կազմակերպման ներառականության ու համապատասխան մասնագետների առկայության մասին տվյալներ, որպեսզի ծնողն իմանա՝ ինչպես վարվել հաշմանդամություն ունեցող երեխայի պարագայում:

Թեև խնդրի լուծումը կարևոր համարվեց, սակայն իրականացման մեխանիզմը, այն է՝ կրթության կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումը, նոր հեծանիվ հորինելու պես մի բան դիտարկվեց քննարկման մասնակիցների մի մասի կողմից, երբ կա կրթական ոլորտի հետ կապված համակարգ համայնքապետարաններում և երեխաների հաշվառման ծրագիր Երևանի քաղաքապետարանում ու կարելի է սրանք ուսումնասիրել, ադապտացնել ու աշխատեցնել:

Նոր ստեղծվելիք համակարգի հետ կապված կան որոշ մտավախություններ, թե արդյոք ծնողները կկարողանան տեխնիկապես օգտվել համակարգից ու սա լրացուցիչ դժվարությունների և կոռուպցիոն ռիսկերի պատճառ չի դառնա արդյոք: Մյուս մտավախությունն ինտերնետ հասանելիությունն է. ինչպես պետք է աշխատի ծրագիրը նման դեպքերում:

Կրթության կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ստեղծումն ու ներդրումը, այսպիսով, կապահովի թափանցիկություն և հաշվետվողականություն խնդրի կարգավորման գործընթացում, բայց, այնուամենայնիվ, մասնակիցները կարևորեցին օֆլայն մշտադիտարկումները, որպեսզի ստուգել նաև իրական հաճախելիությունը:

***Open & Social. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն և իրազեկվածության բարձրացում***

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում են սոցիալական պաշտպանության շուրջ 80 ծրագրեր, որոնք գերազանցապես ենթադրում են հանրությանը մատուցվող ծառայություններ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ ընկալելի չէ հանրության կողմից: Այս առումով կա անհրաժեշտություն հանրության շրջանում սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն, ամբողջական, մատչելի, թիրախավորված և կառավարելի տեղեկատվության ապահովման, ինչը վերջին

հաշվով բարձրացնելու է հանրության իրազեկվածությունը և նպաստելու է սոցիալական ծառայություններում շահառուի կողմից տեղեկացվածության պակասի պատճառով կոռուպցիոն երևույթների ճնշմանը, քանի որ քաղաքացին առավել լավ է տիրապետելու իր իրավունքներին:

«Open & Social» գործիքի ու դրա հնարավորությունների մասին տեղեկացվածության մակարդակը հանրության շրջանում բարձրացնելն առաջին քայլն է գործիքի կիրառության հաջողության համար, ինչի համար լավագույն գործընկերներ են համարվում համայնքապետարաններն ու հասարակական կազմակերպությունները: Այս գործում մեծ անելիք ունի նաև մեդիան, մասնավորապես՝ սոցիալական մեդիան: Համակարգի, գործիքի առավել արդյունավետ գործառնման համար, արվեցին նաև հետևյալ առաջարկությունները.

- Գործիքն ունենա եռալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն որոնողական համակարգ ու համակարգի հիմքում լինի ըստ ծառայությունների որոնման հնարավորությունը:
- Համակարգն ունենա առանձին բաժին՝ ուղեցույց, որը կհեշտացնի գործիքից օգտվելը:
- Գործիքն «օգնության» հնարավորություն ունենա, որ, օրինակ, եթե որևէ տեղեկատվություն այցելուն չի կարողանում գտնել, կարողանա նամակով գրել ու պատասխան ստանալ:
- Համակարգը բաժանորդագրվելու հնարավորություն ունենա, ու այցելուն պարբերաբար ինֆորմացիա ստանա նորությունների մասին (նոր ծառայություններ, դրանց հասանելիություն և այլն):
- Համակարգում առկա լինեն ոլորտին առնչվող բոլոր օրենքները, ենթաօրենսդրական ակտերն ու կարգավորումները, կառավարության որոշումները, որոնց զուգահեռ լինի նաև դրանց մատչելի ներկայացումը,
- Համակարգը հնարավորություն տա իդենտիֆիկացնել նպաստառուներին (առանց գումարի չափի) և բաց ու հասանելի լինի այդ տեղեկատվությունը: Տվյալների բացությունը կարևոր է, քանի որ սոցիալական տարբեր ծառայությունների բյուջեն ձևավորվում է հարկերի շնորհիվ, ուստի յուրաքանչյուրն ուզում է իմանալ՝ ինչպես և ովքեր են ծախսում այդ գումարները: Պետական տարբեր մարմինների, դեպք վարողների համար սա կարևոր տվյալների բազա կարող է լինել նաև:
- Կարևոր է, որ գործիքը հետադարձ արձագանքի հնարավորություն տա սոցիալական ծառայություններից օգտվածներին: Համակարգի միջոցով նրանք կարողանան գնահատել ստացած ծառայության որակը ու այն մատուցող կազմակերպությանը, որի հիման վրա ձևավորվի կազմակերպության վարկանիշը: Պարտադիր է, որ գնահատականը լինի փաստարկված և կոնկրետ՝ ինչն էր լավ, ինչը վատ:
- Գործիքի կիրառությունը արժեքավոր կլինի նաև կենսաթոշակային համակարգի համար, որպեսզի նույն կերպ բաց և թափանցիկ վարվի նաև այդ տվյալների հետ աշխատանքը:



Գործիքի, համակարգի գործառնան հետ կապված, սակայն, կա հետևյալ մտավախությունը, որ ինտերնետ կապի հասանելիության, համապատասխան հեռախոսի կամ համակարգչի բացակայության ու գործիքից օգտվելու գիտելիքների բացակայության պատճառով դրա հասանելիությունը ողջ հասարակությանը ապահովված չի լինի:

## *Հավելված 1. Հանրային քննարկման սցենարներ*

1. **ՏԻՄ հաշվետվողականություն վարչական ծառայությունների էլեկտրոնային հարթակի ստեղծման (էլեկտրոնային ծառայությունների տրամադրման) և համայնքային բյուջեների կազման հարցերում**

Ներկայումս հանրապետության համայնքների գերակշիռ մասում շահագործվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության նախաձեռնությամբ ստեղծված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ), որի միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններն ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված բազմաթիվ գործառնություններն իրականացնում են էլեկտրոնային եղանակով: Մշակվել են ՏԻՄ-երի կողմից տրամադրվող ավելի քան 60 վարչական ծառայությունների (թույլտվությունների, տեղեկանքների տրամադրում և այլն), ընթացակարգերի նկարագրեր:

Այդ ծառայությունների ցանկում արդեն իսկ կան այնպիսիք, որոնց մատուցման ամբողջ ցիկլը իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ ՀԿՏՀ-ի միջոցով, սակայն համայնքային ծառայությունների որակի և հասանելիության բարելավման նպատակով անհրաժեշտ է թվարկված արդյունքների համադրում, համայնքապետարանների կողմից տրամադրվող էլեկտրոնային ծառայությունների քանակի աստիճանական ավելացում, որոնք հասանելի կլինեն տվյալ համայնքի համացանցային կայքի գլխավոր էջի ակնհայտ տեսանելի մասում զետեղված հղմամբ:

Բնակչին առավել հասանելի և ինֆորմացված համայնքային պաշտոնական կայքեր ունենալու համար անհրաժեշտ է ներառել.

- Համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող կառույցների բյուջեները,
- Անկախ պատկանելիությունից՝ համայնքում առկա բոլոր կառույցների մասին (կրթական, մշակութային և այլն) տեղեկատվությունը (հասցե, բյուջե, մատուցվող ծառայություններ և այլն)
- Համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների առցանց եղանակով հասանելիության ապահովումը,
- Գովազդների, առևտրի և այլ տեսակի թույլտվությունների հրապարակումը,
- Քաղաքում կատարվելիք կամ սպասվող շինարարության հետ կապված տեղեկատվություն (շինարարության հասցե, սկիզբ, ավարտ, նախատեսված բյուջե, հովանավորող կազմակերպություն),
- Քաղաքում առկա զբոսայգիների, տեսարժան և պատմամշակութային վայրերի մասին տեղեկատվություն ( հասցե, նկարներ, հակիրճ բնութագիր),
- Տեղական մակարդակում e-draft մոդելի կիրառում, այն է համայնքապետի, ավագանու որոշումների նախագծերի տեղադրում համայնքապետարանի կայքում՝ տեղեկացման և քննարկման նպատակով:

ՏԻՄ հաշվետվողականության կարևոր բաղադրիչ է նաև **Համայնքային բյուջեի** նախագծի մշակմանը համայնքի մասնակցությունը, որն ավելի ցածր է, քան հարկավոր է արդյունավետ կառավարման համար: Օրենսդրությամբ սահմանված է, որ համայնքային բյուջեի նախագիծը պետք է դրվի հանրային քննարկման, սակայն հանրային մասնակցության, նրանց ակտիվ ներգրավման մեխանիզմների մշակման հարցերում կան անելիքներ:

## **2. Ջրային ռեսուրսների պետական կադաստր. Ջրային ռեսուրսների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում և ներդրում**

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը վարում է ջրային ռեսուրսների պետական կադաստրը, ինչն իրենից ներկայացնում է տեղեկատվական համակարգ: Ներկա դրությամբ աշխատանքներ են տարվում ջրային ռեսուրսների պետական կադաստրի թարմացման ուղղությամբ, և թարմացումից հետո ջրային ռեսուրսների պետական կադաստրի ամբողջական տվյալները՝ բացառությամբ ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների, կտեղադրվեն համապատասխան ինտերնետային կայքում, որից կարող են անվճար օգտվել բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձիք: Միաժամանակ, համապատասխան ծրագրի ապահովման դեպքում ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործառույթը ևս հնարավոր կլինի իրականացնել էլեկտրոնային եղանակով:

Ջրային ռեսուրսների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման համար անհրաժեշտ է թարմացնել ջրային ռեսուրսների պետական կադաստրը և շահագրգիռ կազմակերպություններում առկա տվյալների բազաների և Բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության տվյալների շտեմարանի միջև կապ ստեղծել:

Ջրային ռեսուրսների վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման և ներդրման նպատակն է բարելավել ջրային ոլորտի կառավարման կարգավորման արդյունավետությունը՝ ապահովելով ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը բնապահպանական և տնտեսական առումներով, բարձրացնել հասարակության իրազեկվածության և մասնակցության մակարդակը ջրային ռեսուրսների ու դրանց կառավարման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում: Տեղեկատվության հասանելիության տեսանկյունից սա կարևոր խթան կհանդիսանա **ուրրտի թափանցիկության և հանրային ծառայությունների մատուցման բարելավման**, ոլորտում **ռիսկերի կառավարման և վարչարարության նվազեցման**, ջրային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրների լուծման գործընթացում **հանրային մասնակցության** ապահովման տեսանկյունից:

### **3. ՀՀ հողային կադաստրի հանրային հասանելիության ապահովում**

Հայաստանի Հանրապետությունում հողային կադաստրը փակ է, և որևէ տարածքի մասին տեղեկատվություն ստանալու համար հարկավոր է դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե կամ համապատասխան ՏԻՄ: Հողօգտագործման սխեմաները, գոտիավորման նախագծերը և տարածական պլանավորման փաստաթղթերը թեև օրենքով հանդիսանում են բաց փաստաթղթեր, բայց հասանալի չեն, կամ հասանելի են այնպիսի ձևաչափերով, որոնք ընկալելի չեն քաղաքացիների համար: Արդյունքում, տարիներ շարունակ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն այդ տեղեկատվությունը տրամադրել է քաղաքացիներին առձեռն՝ միայն օրենքով սահմանված կարգով, իսկ համայնքների ղեկավարներն ունեցել են հողամասերը կամայական տնօրինելու հնարավորություն՝ առանց որևէ հանրային վերահսկողության հնարավորության:

Հանրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարման, հանրային վստահության բարելավման, համապատասխան կառույցների հանրային հաշվետվողականության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել հողային կադաստրի և հողօգտագործման սխեմաների ու գոտիավորման փաստաթղթերի ամբողջական հասանելիությունը հանրությանը՝ քարտեզի միջոցով, որոնման հնարավորությամբ, ապահովելով անձնական տվյալների պաշտպանության ռեժիմը: Այդպիսով, պետության և ՏԻՄ-երի կողմից տնօրինվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակումը կապահովի հողային ռեսուրսների մասին տեղեկատվության և դրանց վերաբերյալ որոշումների հանրային հասանելիությունը, հողօգտագործման վերաբերյալ ընդունվող որոշումների թափանցիկությունը: Սա կօգնի ապահովել հանրային հաշվետվողականություն, ինչի արդյունքում հնարավոր կդառնա հանրային վերահսկողությունը հողօգտագործման սխեմաների ու գոտիավորման փաստաթղթերի կիրարկման նկատմամբ, որն էլ կբարձրացնի հանրային վստահությունը այդ մարմինների հանդեպ:

### **4. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար քաղաքացիների առցանց հերթագրման հնարավորություն**

Ներկայումս պարզելու համար, թե որ բուժհաստատությունում կարելի է հերթագրվել և ստանալ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում՝ քաղաքացին ստիպված է լինում բուժհաստատությունից բուժհաստատություն գնալ, հերթերի մեջ կանգնել, լավագույն դեպքում՝ զանգահարել: Եվ շատ հաճախ բուժհաստատությունը կարող է սխալ տեղեկատվություն տրամադրել:

Այս պահին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում փաստացի կատարված աշխատանքների, առկա տեղերի և հերթագրումների մասին հանրությանը իրազեկելու և թափանցիկ դարձնելու համար ստեղծվել է <https://www.armed.am/govlimits/> կայքը, որտեղ երեք գույնով ցուցադրվում են վերը նշված տվյալները՝ կարմիր (սպառված), դեղին (հերթագրված), կանաչ (առկա), և ֆինանսական սահմանաչափերը: Մահմանաչափերի ցուցադրման աղբյուրը հանդիսանում է պետական պատվերի շրջանակում յուրաքանչյուր բժշկական կազմակերպության համար համակարգում մուտքագրվող տվյալները:

Նախատեսվում է, որ քաղաքացիների առցանց հերթագրման սխեման ավելի կհստակեցվի և պարզեցվի, կստեղծվի նաև առցանց հերթագրումների հնարավորություն (ուղեգիր տրամադրող բժիշկը համակարգում կմուտքագրի ուղեգրի համարը և բացի խնդրի հետ առնչություն ունեցող մուտքագրած տեղեկատվության, կկցի նաև հավելյալ անհրաժեշտ փաստաթղթեր: Պացիենտը առկա համակարգի իր էջից կհերթագրվի՝ ընտրելով բժշկական կազմակերպությունը, կցելով ուղեգիրը: Առցանց հերթագրում պացիենտի փոխարեն կկարողանա իրականացնել նաև ուղեգիր տրամադրող բժիշկը: Ընտրած բժշկական կազմակերպությունում ըստ հայտի կիրականացվի հերթագրում և դրա մասին կտեղեկացվի պացիենտին: Հերթագրման ժամանակ համակարգը կիրականացնի ուղեգրի համարի ստուգում՝ կեղծումներից խուսափելու համար):

Բժշկական կազմակերպություններում պետական պատվերի և ապահովագրական կազմակերպությունների կողմից սոցիալաբաժնի շրջանակներում մատուցվող ծառայությունների հասանելիության, թափանցիկության ապահովման, որակի բարելավման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով է ստեղծվելու պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար քաղաքացիների առցանց հերթագրման համակարգը: Ոլորտի թափանցիկությունը (սահմանաչափերի մասին տեղեկատվության առցանց տրամադրում), քաղաքացիների մասնակցությունը գործընթացին (առցանց հերթագրման հնարավորություն) կխթանեն բժշկական կազմակերպությունների պատասխանատվությունը, կհանգեցնեն աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձարցմանը: Մա հնարավորություն կտա բժշկական կազմակերպություններում առաջացող հերթերը կարգավորել սահմանաչափերի առցանց տրամադրման և հերթագրման միջոցով՝ կրճատելով նաև դրա հետ կապված անհարմարությունները՝ պացիենտի ժամանակը և ֆինանսական ծախսերը (հատկապես մարզերում բնակվող քաղաքացիների համար):

## **5. Կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգ**

Կրթական հաստատություններում երեխաների հերթագրումների, կրկնակի գրանցումների, ուսումնական հաստատություններ ընդունելության և տեղափոխման

մեխանիզմների հստակեցման, թափանցիկության ապահովման ու վարչարարության նվազեցման խնդիր ունենք այսօր:

Խնդրի կարգավորման նպատակով անհրաժեշտ է կրթության կառավարման տեղեկատվական միասնական համակարգի զարգացում, որը կներառի բոլոր կրթական հաստատությունները՝ անկախ կրթական մակարդակի ու կազմակերպատիրավական ձևից և ենթակայությունից:

Այն հնարավորություն կտա բազմաշերտ և համապարփակ տեղեկատվություն ստանալ կրթական կազմակերպության գործունեության մասին, ծանոթանալ հաշվետվություններին, իրազեկվել հաստատություններում տեղերի առկայության, ընդունելության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Համակարգը հնարավորություն կտա բացառել մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների կրկնակի, անգամ եռակի, մանկապարտեզներում մինչև 1 տարեկան երեխաների հերթագրման դեպքերը, որի արդյունքում ունենում ենք հերթագրված երեխաների ուռճացված թվեր: Վերջինս, իհարկե, ևս մեկ խնդրի հետևանք է. մանկապարտեզներում պետք է լուծել անհրաժեշտ տեղերի հարցն ու բացատրել ծնողներին, որ երբ լրանա երեխայի մանկապարտեզ հաճախելու տարիքը, նրա համար արդեն իսկ ստեղծված կլինեն բոլոր պայմաններն, ու որևէ խնդիր չի առաջանա:

Միասնական էլեկտրոնային կառավարման միջոցով հնարավոր կդառնա տեղեկատվության ամբողջականության ապահովումը, հավաստիության, հանրային հաշվետվողականության, աշխատանքի արդյունավետության բարձրացումը: Մա կնպաստի նաև կրթական հաստատությունների կառավարման ճկունությանը, օպերատիվությանը, թափանցիկությանը, վերահսկողությանը, ինչպես նաև տրամադրվող ծառայությունների որակի և անվտանգության բարձրացմանը:

## **6. Open & Social. Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիություն և իրազեկվածության բարձրացում**

Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում իրականացվում են սոցիալական պաշտպանության շուրջ 80 պետական ծրագրեր, որոնք ենթադրում են նաև բազմաբնույթ ծառայություններ, բազմաբնույթ նախապայմաններով և ընթացակարգերով: Այս առումով կա հանրությանը իրազեկելու և սոցիալական ծառայություններն առավել հասանելի դարձնելու անհրաժեշտություն, ինչը կապահովվի նաև պետություն-քաղաքացի հարաբերությունների թափանցիկությունը, վստահելիության բարձրացումը և կոռուպցիոն դրսևորումների նվազեցումը:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների մատչելիության և իրազեկվածության բարձրացման շրջանակներում մշակված ինովացիոն գործիքների միջոցով կապահովվի

սոցիալական ծառայությունների մանրամասնորեն դասակարգված և ինքնաշխատ ներկայացվող տեղեկատվության հասանելիությունը, սոցիալական ծառայությունների գնահատման գործընթացում հանրության մասնակցությունը, ծառայություններ մատուցող կազմակերպությունների ռեյտինգավորումը՝ ապահովելով սոցիալական ծառայությունների մատչելիության և իրազեկվածության բարձրացումը հանրության համար:

«Open&Social» տվյալների հավաքագրման, համակարգման և վերլուծության վրա հիմնված գործիքի ներդրումը, այսպիսով, կապահովի հանրային ծառայությունների բարելավումը և հանրային օրինավորության խթանումը ոլորտում, իսկ հանրային մասնակցությունն ապահովող գործընթացների շնորհիվ կբարձրանա պետության կողմից սրամադրվող ծառայությունների որակը, էապես կնվազի սոցիալական ծառայությունների վերաբերյալ հանրության տեղեկատվական անորոշությունը և կբարելավվի հանրային հաշվետվողականության մակարդակը: Սոցիալական ծառայությունների որակի վերաբերյալ հետադարձ կապի շնորհիվ դրանց արդյունավետությանը կբարձրանա և կապահովվի տեղեկատվության մատչելիությունն ու հանրային մասնակցությունը: